ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. դեկտեմբերի 8-ից 21-ը
Ռուսաստանի Դաշնություն ք. Մոսկվա
գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**
   Կարեն Բալայան-ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության շնագիտական /կենտրոն/ բաժնի պետ /Ժ.Թ.Պ/
   Հայկ Հարությունյան-ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության շնագիտական /կենտրոն/ բաժնի մաքսային տեսուչ /Ժ.Թ.Պ/
   Ալբերտ Հարությունյան- ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության շնագիտական /կենտրոն/ բաժնի մաքսային տեսուչ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Ռուսաստանի Դաշնություն ք. Մոսկվա,
   Կ.Բալայան-2024թ.-ի դեկտեմբերի 15-21-ը
   Ա.Հարությունյան և Հ.Հարությունյան-2024թ.-ի դեկտեմբերի 8-21-ը

3. **Հրավիրող կողմը.**
   Հրավերը ստացվել է 27.11.2024թ. Ռուսաստանի Դաշնության Ֆինանսների նախարարության Ֆեդերալ մաքսային ծառայության մաքսանենգության դեմ պայքարի գլխավոր վարչության պետի պաշտոնակատար պարոն Ա.Ա. Ֆիսենկոյից :

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Կարեն Բալայանի գործուղումը նախատեսված էր ՌԴ ք. Մոսկվայում կազմակերպվող ինչպես որակավորման բարձրացման և փորձի փոխանակման նապատկով, այնպես էլ՝ ք. Մոսկվայի միջազգային օդանավակայանների մաքսակետերում շնավարժների աշխատանքներին մանրամասն ծանոթանալու նպատակով:
   Հայկ Հարությունյանի և Ալբերտ Հարությունյանի գործուղումը նախատեսված էր ՌԴ ք. Մոսկվայի միջազգային օդանավակայանների մաքսակետերում և Ռուսաստանի Դաշնային մաքսային ծառայության շնագիտական կենտրոնում 14-օրյա վերապատրաստման դասընթացներին մասնակցելու նպատակով:

5. **Քննարկված թեմաները.**
   Գործուղման ընթացքում քննարկվել են ստորև ներկայացված թեմաները՝
   - ԱՊՀ անդամ պետությունների մաքսային ծառայությունների իրավապահ գործունեության կազմակերպման արդի հիմնախնդիրները,
   - ԱՊՀ անդամ պետությունների մաքսային ծառայությունների շնավարժության գործունեության ոլորտի կառավարման կազմակերպման արդի հիմնախնդիրները,
   - Շնավարժ-մասնագետների մասնակցությունը մաքսային հսկողության գոտիներում կազմակերպելու արդիական հարցերը,
   - Շնավարժության հիմունքների հարցերն ու պատասխանները:

- Անցկացվել են ծառայողական շների գործնական մարզումներ:
- Ցուցադրվել են պրակտիկայում ծառայողական շների կիրառման նորագույն մեթոդները և տեխնիկաները:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**
Այցի շրջանակներում հանդիպումներ են տեղի ունեցել ՌԴ կինոլոգիական ծառայության ղեկավար պարոն Ա. Վ. Չերկավսկու, Շերեմետևո օդանավակայանի շնագիտական բաժնի ղեկավար պարոն Ա.Ս. Մալինովսկու, ինչպես նաև՝ Դոմոդեդովո օդանավակայանի շնագիտական բաժնի ղեկավար պարոն Ի.Ա. Նազարովի հետ:
Քննարկվել են
- ԱՊՀ անդամ պետությունների մաքսային ծառայությունների իրավապահ գործունեության շրջանակներում օդանավակայանների տերմինալներում շնավարժության աջակցության գործում դրոյթների կիրառման առանձնահատկությունները,
- Մաքսային մարմինների այլ իրավապահ ստորաբաժանումների հետ կինոլոգիական ստորաբաժանումների համակարգման և փոխգործակցության կազմակերպման հարցերը
- Մաքսային մարմինների օպերատիվ-հետախուզական գործունեության համար ծառայողական շների մասնակցության և աջակցության կազմակերպման հարցերը,
- ԱՊՀ անդամ պետությունների մաքսային ծառայությունների իրավապահ գործունեությանը ծառայողական շների մասնակցության և աջակցության նպատակով ծառայողական շների վարժեցման և պատրաստման կազմակերպման հարցերը,
- ԱՊՀ անդամ երկրների մաքսային մարմիններում ծառայողական շների պահպանման կազմակերպման հարցերը,
- ԱՊՀ անդամ պետությունների մաքսային ծառայությունների իրավապահ գործունեությանը ծառայողական շների աջակցության բարելավման ընթացիկ խնդիրներն ու խոստումնալից ուղղությունները,
- Օդանավակայաններում ծառայողական շներին կիրառելու ժամանակ թույլ տված հիմնական սխալները կանխելու և վերացնելու գործում շնավարժների աշխատանքի բարելավման ուղիներն ու միջոցները,
- Շնավարժները ծանոթացել են ք. Մոսկվայի միջազգային օդանավակայանների մաքսակետերում ծառայություն իրականացնող շնավարժների աշխատանքի կազմակերպմանը և տեղում անց են կացվել գործնական պարապմունքներ իրենց կցված ծառայողական շների հետ:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**
Գործուղումը նախատեսված էր վերապատրաստման դասընթացներին մասնակցելու նպատակով, հետևաբար որևէ նոր որոշում չի ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:
Վերապատրաստման դասընթացի ավարտին ինչպես Կարեն Բալայանին, այնպես էլ Հայկ Հարությունյանին և Ալբերտ Հարությունյանին շնորհվել են համապատասխան որակավորման սերտիֆիկատներ:

Հանդիպան ժամանակ ռուսական կողմը ցուցադրել է թմրանյութերի, հոգեմետ դեղերի, թութունի և դրա տարատեսակների հայտնաբերման ուղղությամբ աշխատող ծառայողական շներ, ներկայացվել են նրանց ուսուցման մեթոդաբանությունը և կիրառման տեխնիկաները: Նոր մեթոդների օգտագործման սխեման իր հերթին թույլ կտա ծառայության մեջ կիրառել այնպիսի ծառայողական շներ, որոնք նախկինում օգտագործվող մեթոդներով պիտանի չէին համարվում ծառայության համար:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

Գործուղման ընթացքում ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ 2025թ.-ին կազմակերպել ՌԴ Շերեմետևո օդանավակայանի շնագիտական կենտրոնի շնավարժ-մեթոդիստների գործուղումը ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ շնագիտական /կենտրոն/ բաժին, շնավարժների, շնավարժ-հրահանգիչների և իրենց կցված ծառայողական շների ուսուցումն ու վերապատրաստումը կազմակերպելու, ինչպես նաև համապատասխան թեստավորումն անկացնելու նպատակով:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը**

Կարեն Բալայան

Հայկ Հարությունյան

Ալբերտ Հարությունյան

«23» դեկտեմբերի 2024թ.